Արձանագրություն N 3
« ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12.04.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբինյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Անտոնյան , Տ. Սարգսյան
Ա. Խառատյան, Հ. Գեղելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Բ. Արամյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի միջև բանակցությունների անցկացման մասին

Բանակցություններին ներկայացել էր «***Ռեալ Բուսինեսս***» ՍՊԸ-ն և ***«Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն:***

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի բանակցություններին ներկայացած՝ «***Ռեալ Բուսինեսս***» ՍՊԸ-ն առաջարկած գինը նվազեցրել է մինչև՝ **3.670.000 ՀՀ դրամ**, (կից մասնակիցի Հավելված 1)

Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի բանակցություններին ներկայացած՝ «***Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ***» ՍՊԸ-ն առաջարկած գինը նվազեցրել է մինչև՝ **3.655.000 ՀՀ դրամ**, (կից մասնակիցի Հավելված 1)

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր, (բանակցությունների արդյունքում) չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «***Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ***» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի

առկայության վերաբերյալ **15.04.2019թ.** հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3.2. **15.04.2019թ** ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագիրը, անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը,(հրավերի 6, 6.1 հավելվածներ): Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հրավերով նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Մասնակցում էին՝

Նախագահ՝ ---------- Կ. Բաբինյան

Անդամներ՝ ---------- Գ. Անտոնյան

---------- Տ. Սարգսյան

---------- Ա. Խառատյան

---------- Հ. Գեղելյան

Քարտուղար՝ ---------- Բ. Արամյան